ԹԱՄԱԴԱ.– (Նոյնպէս հազում է։)

ՆԱԶԱՐ.– (Կիսովին վեր է կենում, որ փախչի։)

ՀԻՐԵՐ.– (Փախչելու շարժում են անում։)

ԹԱՄԱԴԱ.– (Նազարի վարանոտ շարժումը նկատելով) Համեցէ՛ք, անո՛ւշ արա։

ՀԻՐԵՐԸ.– (Մի փոքր հանդարտում են եւ սկսում ուտել։)

Ա ՀԻՐ.– (Իր մօտ նստածներին) Ո՛վ է, ինչ մարդ է։

Բ ՀԻՐ.– Հա, է , էս դրօշա՛կը, թո ւրը…

Գ ՀԻՐ.– Ինքն էլ սուս ու փուս,

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ.– Սա, որ էդպէս դրօշակով, թրով նստեց՝ սրա տակին շատ բան կլինի։

Լռութիւն։

ՆԱԶԱՐ.– (Հազում է) Հը՛մ…

ԲՈԼՈՐԸ.– (Նայում են նրան)։

Ա ՀԻՐ.– Ի՞նչ ասաւ,

Բ ՀԻՐ.– Ասաւ՝ «Հը՛մ»։

Գ ՀՅՈՒՐ.– Ինչ ասաւ։

Դ ՀԻՐ.– Ասաւ՝ «Հը՛մ». (Հերթով նոյն հարցն ու պատասխանը՝ մինչեւ մի ծերունուն։)

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ.– Որ ասաւ՝ «Հը՛մ», ասել է Քեռօղլին է։

Բ ԾԵՐՈՒՆԻ.– (Ձեռքը ճակտին հովանի անելով եւ մտիկ տալով Նազարին) Չէ, Քեռօղլու թոռն է։

Լռութիւն։

ՆԱԶԱՐ.– (Հպարտ) Գեադա՞։ Մի բան կուզեմ իմանամ էս ժողովրդից։ Դուք Դաղստանցի՞ էք։

ԹԱՄԱԴԱ.– Չէ, մենք Զորբաշենցի ենք։

ՆԱԶԱՐ.– Աշխարհքի անո՞ւնը։

ԹԱՄԱԴԱ.– Զորբաստան,

ՆԱԶԱՐ.– (Գլուխը ծանր շարժելով) Զորբաստա՞ն։ Շա՛տ լաւ։ Է՛դ կուզէի իմանամ։ (Բեղերը սրում է։ Լռութիւն։ Հազում է։) Գեադա՞, Հնդըստանու ճամփէն ո՞ր կողմով է դնում։

ԹԱՄԱԴԱ.– Չենք իմանում,

ՆԱԶԱՐ.– (Գլուխը ծանր շարժելով) Չե՞ք իմանում։ Հա՛։ Լա՛ւ։ էդ կուզէի իմանամ։ (Լռութիւն։)